Դաս 46.Անհատի դերը հասարակության կայացման գործում

Նուբար փաշա

Նուբար փաշան (Նուբար Նուբարյանը) եգիպտահայ հայտնի հասարակական, քաղաքական գործիչ է: Նա ծնվել է Իզմիրում 1825 թվականին: Նրա հայրը՝ Մկրտիչ Նուբարյանը, Դավիթ Բեկի զինակից զորահրամանատար Նուբարի ժառանգներից էր: Նա ստացել է փայլուն կրթություն: Սովորել է Շվեյցարիայի և Ֆրանսիայի հեղինակավոր ուսումնական հաստատություններում, իսկ Եգիպտոս վերադառնալուց հետո 1845 թվականին նշանակվել է Եգիպտոսի կուսակալ Աբբաս փաշայի անձնական քարտուղար:

1850-ականներին Նուբար Նուբարյանը Եգիպտոսի առաջատար պետական և քաղաքական գործիչների շարքում էր: Անվիճելի է Նուբարի ավանդը Միջերկրական և Կարմիր ծովերը միավորող Սուեզի ջրանցքի կառուցման գործում: Ջրանցքի կառուցման համաձայնությունը ստանալու նպատակով նա 1866 թ. ուղևորվում է Կ. Պոլիս: Այստեղ նրան հաջողվում է սուլթանին համոզել ոչ միայն համաձայնություն տալ ջրանցքի կառուցմանը, այլև դրա համար հատկացնել այն ժամանակվա չափանիշներով առասպելական գումար: Ահա թե ինչ է նրա մասին գրել Եգիպտոսի և Սուեզի ջրանցքի շրջանի բրիտանացի գլխավոր վերահսկիչ Իվլին Բերինգը: «Նուբար փաշան ժամանակակից եգիպտացի քաղաքական գործիչներից ամենահետաքրքիրն է: Ինտելեկտուալ տեսանկյունից նա մի գլուխ բարձր է իր մրցակիցներից»: Հետագա տարիներին Նուբար փաշայի հեղինակությունն այնքան բարձրացավ, որ 1878 թ. նա նշանակվեց Եգիպտոսի վարչապետ՝ դառնալով այդ երկրի պատմության մեջ առաջին վարչապետը:

Որպես հայրենասեր անհատ՝ Նուբար փաշան զբաղվել է նաև ինչպես Եգիպտոսի հայ համայնքի, այնպես էլ ամբողջ հայկական սփյուռքի ճակատագրով: Կազմակերպել է Թուրքիայից Եգիպտոս ժամանած հայ գաղթականների օգնությունը, գումար է հատկացրել պարբերականների հրատարակության համար, հիմնել է դպրոցներ և այլն: Նուբար փաշան մահացել է 1899 թվականի հունվարի 14-ին Փարիզում: Նրա մահվանից հետո այդ գործը շարունակել է նրա որդին՝ Պողոս-Նուբար փաշան: